

ԱՐՄԵՆ ՍԵՐՈՒԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ծնվել է 1980թ. սեպտեմբերի 23-ին Երևանում:

1987-1997թթ. ընդունվել և ավարտել է Գ. Ադդարյանի անվան թիվ 133 միջնակարգ դպրոցը:

1990-1995թթ. երաժշտական կրթություն է ստացել Երևանի Յ. Դանիելյանի անվան թիվ 3 արվեստի դպրոցում:

1997թ. ընդունվել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի Ֆինանսահաշվային ֆակուլտետի Ֆինանսներ և վարկ բաժինը, որն ավարտել է 2002թ.-ին՝ ստանալով տնտեսագետ - ֆինանսիստի որակավորում:

Ուսանելու տարիներին զբաղվել է նաև հասարակական աշխատանքով:

1997-2002թթ. եղել է «Նոր Նորք համայնքի ուսանողական միություն» հ/կ ղեկավար:

2000-2002թթ. աշխատել է որպես «Փոքրիկ Փարիզ» համալիրի փոխտնօրեն:

2002-2004թթ. ծառայել է ԼՂՀ պաշտպանության բանակում՝ որպես կառավարման դասակի հրամանատար: Ծառայության ընթացքում արժանացել է բազմաթիվ պատվոգրերի, մասնավորապես պարգևատրվել է բանակաշինության գործում արժանի ավանդի համար:

2004-2006թթ. եղել է ՀՀԿ Նոր Նորք ՏԿ երիտասարդական կազմակերպության հիմնադիր նախագահը:

2005թ. աշխատել է «Նյու Սթայլ» դիզայն ստուդիայում որպես գլխավոր հաշվապահ:

2005-2007թթ. աշխատել է «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամում որպես ֆանդայզինգի մասնագետ:

2007 - 2008թթ. աշխատել է ՀՀ ԿԱ ՀՊԾ Արաբկիրի հարկային տեսչությունում, 2008թ. եղել է «ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ-ի ֆինանսական գծով փոխտնօրենը:

2009թ. մինչ օրս աշխատում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու հարկային տեսչությունում:

Հայաստանի հանրապետական կուսակցության շարքերում է 2004թ.-ից:

2006թ.-ից մինչ օրս ՀՀԿ երիտասարդական կազմակերպության Երևանի խորհրդի նախագահն է:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր:

